02 Շաբաթաթերթ

Հայաստանի Հանրապետության ոստիկանություն

ISSN 1829-2526

Տպագրվում է 1990 թվականից

18 (1417) • 17 մայիսի 2019 թ. • Գինը՝ 150 դրամ

www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am www.police.am

Համագործակցության հեռանկարներ

Մայիսի 14-ին ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանի գլխավորած պատվիրակությունն այցելեց Ֆրանսիայի Հանրապետության Լիոն քաղաք՝ Ինտերպոլի Գլխավոր Քարտուղարություն:

Այցի շրջանակներում Վալերիյ Օսիպյանը հանդիպում ունեցավ Ինտերպոլի գլխավոր քարտուղար Յուրգեն Շտոկի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին Ինտերպոլի ուղիներով իրականացվող համագործակցությանն առնչվող հարցեր, մասնավորապես՝ Ինտերպոլի տվյալների պահոցներ մուտքի ընդլայնման, օպերատիվ ծառայությունների օժանդակության, հետախուզվողների հայտնաբերման, անդրազգային հանցավորության դեմ պայքարին վերաբերող խնդիրներ եւ այլն:

Վալերիյ Օսիպյանը կարեւորեց Ինտերպոլի դերը եւ պատրաստակամություն հայտնեց աջակցելու Ինտերպոլի գործունեությանը: Ինտերպոլի գլխավոր քարտուղարն իր հերթին բարձր գնահատեց Հայաստանի դերակատարությունը եւ ակտիվ մասնակցությունը Կազմակերպության նախաձեռնություններին: Վալերիյ Օսիպյանը պաշտոնապես հրավիրեց Ինտերպոլի գլխավոր քարտուղար Յուրգեն Շտոկին՝ այցելելու Հայաստանի Հանրապետություն:

Այցի ընթացքում կայացան եւս մի շարք հանդիպումներ Ինտերպոլի Գլխավոր Քարտուղարության պաշտոնյաների հետ, քննարկվեցին Ինտերպոլի անդամ երկրների միջեւ համագործակցության հնարավորությունները, I-24/7 համակարգի ընդլայնման հնարավորությունները եւ այլ հարցեր:

Ի պատիվ ՀՀ ոստիկանության պետի՝ Ինտերպոլի Գլխավոր Քարտուղարության կողմից տրվեց պաշտոնական ճաշ:

Մայիսի 15-ին Վալերիյ Օսիպյանի գլխավորած պատվիրակությունը ժամանեց Նիդեռլանդների Թագավորություն: Ոստիկանության պետն այցելեց Եվրաջասթ եւ հանդիպում ունեցավ Եվրաջասթի նախագահ Լադիսլավ Համրանի հետ:

Եվրաջասթի նախագահը կարեւորեց առաջին անգամ ՀՀ բարձրաստիճան պատվիրակության այցելությունը՝ ընդգծելով իր ղեկավարած կառույցի պատրաստակամությունն ընդլայնելու համագործակցությունը Հայաստանի հետ: Նա կարեւորեց տարվա սկզբին ՀՀ արդարադատության նախարարությունում եւ գլխավոր դատախազությունում Եվրաջասթի հետ համագործակցության պատասխանատուների նշանակումը:

Կողմերը քննարկեցին Եվրաջասթի եւ Հայաստանի միջեւ արդեն իսկ առկա համագործակցության ընդլայնման եւ խորացման հնարավորությունները:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ՀՀ ոստիկանությունում համագործակցության պատասխանատու նշանակելու վերաբերյալ:

Խորհրդակցություն ոստիկանությունում

Մայիսի 11-ին ոստիկանությունում տեղի ունեցավ աշխատանքային խորհրդակցություն, որը վարում էր ՀՀ ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը:

Քննարկվեց եւ բաժին առ բաժին վերլուծվեց վերջին ամիսներին կատարված աշխատանքը: Ներկայացվեցին բոլոր տարածքային ստորաբաժանումների բացահայտման թվային տվյալները եւ առանձին հանցատեսակների վիճակագրությունները:

Վալերիյ Օսիպյանը խոսեց ամենամսյա պարգեւավճարի ճիշտ եւ անկողմնակալ բաշխման մասին: ՀՀ ոստիկանության պետը նշեց, որ պարգեւավճարների չափը որոշում են ստորաբաժանման ղեկավարները, եւ նպատակային բաշխման շնորհիվ պետք է հստակ տարբերվեն բարեխիղճ եւ թերացող ծառայողները: Դա կբարձրացնի ընդհանուր աշխատանքի արդյունավետությունը:

Քննարկման առարկա դարձավ

հանցագործությունների բացահայտման դեպքում հավելյալ պարգեւավճարներով խրախուսելու թեման: ՀՀ ոստիկանության պետն օրինակ բերեց ոստիկանության մի ծառայողի, որը մեկ ամսվա ընթացքում բացահայտել է մի շարք հանցագործություններ եւ մի քանի անգամ խրախուսվել:

Վալերիյ Օսիպյանը, կարեւորելով ոստիկանություն-հասարակություն կապի ամրապնդումը, առաջին հերթին հորդորեց արտաքին ծառայություն իրականացնող ստորաբաժանումներին՝ պարեկապահակետային ծառայողներին, ճանապարհային ոստիկաններին, հաշվառման եւ քննական ստորաբաժանումների, անձնագրային եւ վիզաների վարչության աշխատակիցներին իրականացնել բարձրորակ ծառայություն, օրենքի սահմաններում օգնել ու աջակցել քաղաքացիներին:

Ոստիկանության պետ Վալերիյ Օսիպյանը եւս մեկ անգամ խիստ հանձնարարեց բացառել կոռուպցիոն դրսեւորման որեւէ փորձ, քանի որ բոլոր օրինախախտները հայտնաբերվելու եւ պատժվելու են օրենքի ողջ խստությամբ:

էջ 2

Գողացել էին 98 միլիոն դրամի զարդեր

Մայիսի լույս 5-ի գիշերը ոստիկանություն դիմած անձը հայտնեց, որ բացել են իրենց մեքենայի դուռն ու սրահից գողացել ոսկյա եւ ադամանդյա զարդեր, որոնց ընդհանուր արժեքն, ըստ տուժողի՝ գերազանցում էր 200.000 դոլարը: Դեպքի առթիվ քրեական գործ հարուցվեց:

Մեքենայատերը ոսկու առք ու վաճառքով է զբաղվում: Այդ օրը նա իր ոսկու խանութից զարդեր էր վերցրել տուն տանելու համար եւ օրվա ընթացքում մեքենայով այցելել էր տարբեր վայրեր: Տուժողը տան բակում էր նկատել, որ մեքենայում թողած ոսկյա եւ ադամանդյա զարդերերով տոպրակները չկան: Ահազանգից հետո պարզվեց, որ դեպքը կատարվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բուժհաստատության տարածքում: Հանցագործության բացահայտմամբ սկսեցին զբաղվել ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզները, որոնք մանրակրկիտ ուսումնասիրեցին դեպքի հետ առնչվող, նույնիսկ աննշան թվացող մանրուքները:

Ոստիկանների ուշադրությունը գրավեց այն հանգամանքը, որ տուժողը մեքենան վաճառում էր, եւ տարբեր անձինք գնում էին տեսնելու: Քանի որ մեքենայի դուռը բացել էին հարմարեցված բանալիով, ուստի վարկած առաջ քաշվեց, որ թվացյալ գնորդներից մեկը բանալին ինչ-որ կերպ պատճենահանած լիներ: Հետախուզական միջոցառումները կենտրոնացվեցին այդ վարկածի իսկությունը ճշտելու ուղղությամբ:

էջ 2

Չարաշահումներ դպրոցում

Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում պաշտոնատար անձի կողմից թույլ տրված չարաշահումների վերաբերյալ ԱԱԾ-ից օպերատիվ տեղեկություններ էին ստացվել:

Ոստիկանության Լոռու մարզային վարչության եւ Բազումի բաժնի ծառայողների հետ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում պարզվել է, որ Վանաձորի թիվ 18 միջնակարգ դպրոցի տնօրենը, օգտագործելով պաշտոնեական դիրքը, հաստատապես իմանալով, որ փեսան աշխատում է «Գազպրոմ Արմենիա» ընկերության Վանաձորի տարածքային տեղամասում, 2011 թ. սեպտեմբերից 2018 թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում նրան հրամանագրել է որպես դպրոցի տնտեսական գծով փոխտնօրեն, իսկ 2018 թ. սեպտեմբերից առ այսօր՝ հնոցապանների կարգադրիչ:

Բացի այդ, 2014 թ. հունվարի 1-ից 2018 թ. սեպտեմբերի 1-ը՝ որպես տեխնոլոգիայի ուսուցիչ, իսկ 2016 թ. մայիսի 11-ից 2017 թ. փետրվարի 28-ը որպես դաստիարակ է հրամանագրել երկու քաղաքացիների:

Դպրոցի տնօրենը կազմել, հաստատել եւ վավերացրել է աշխատաժամանակի հաշվարկի կեղծ տեղեկագրեր, ապա դրանք շրջանառության մեջ դնելով՝ ներկայացրել է վճարման: Արդյունքում՝ դպրոցի բյուջեից որպես աշխատավարձ դուրս է գրվել եւ վատնման եղանակով հափշտակվել 20 միլիոն 129 հազար դրամ:

Հարուցվել է քրեական գործ:

Վերադարձ ձեռնաշղթայով

Փեսայի ապերախտությունը սկզբում զայրացրել էր, բայց հետո որոշել էր օգնել պարտքերի մեջ խրվածին: էջ 3

«Պրոֆեսիոնալ» խարդախում

Մարդկանց ներկայացրել էր կեղծված փաստաթղթերի պատճենները, վերցրել նրանց մեքենաներն ու... էջ 7

«Կարմիր խաչի» «ներկայացուցիչը»



«Կարմիր խաչի» աշխատակից ներկայացածը գնելու նպատակով գյուղացիներից վերցրել էր անասուններ ու չէր վճարել: էջ 7

Համակարգ

Խորհրդակցություն ոստիկանությունում

Սկիզբը՝ էջ 1

Խորհրդակցության մասնակիցների ուշադրությունը հրավիրվեց բնակարանային գողությունների բացահայտման ու կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելու խնդրին: Փորձը ցույց է տվել, որ շոգ եղանակներին ավելանում են տներից կատարվող գողությունները, քանի որ հանցագործները բնակարաններ են մտնում բաց դռներով կամ պատուհաններով: Այս առումով ոստիկանության պետը հանձնարարեց համայնքային ոստիկանությանը՝ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնել:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով ոստիկանների ծառայությունը՝ Վալերիյ Օսիպյանը շնորհակալություն հայտնեց անձնակազմին եւ նշեց, որ մեկ տարվա ընթացքում ահռելի թիմային աշխատանք է կատարվել, որի արդյունքներն ակնհայտ են, իսկ դեռեւս առկա որոշ թերացումների վերացման եւ անելիքների իրականացման համար ակնկալվում է պրոֆեսիոնալիզմի հետագա կատարելագործում, ուժերի մոբիլիզացում եւ գործառնական արդյունավետության առավել բարձրացում:

Խորհրդակցության ավարտին հանցագործություններ բացահայտելու եւ ծառայողական պարտականությունները բարեխիղճ կատարելու համար ոստիկանության մի խումբ ծառայողներ արժանացան խրախուսանքների:

Գողացել էին 98 միլիոն դրամի զարդեր

Սկիզբը՝ էջ 1

Պարզվեց, որ գողությունից օրեր առաջ տուժողի գործընկերներից մեկը մտերիմի հետ գնացել էր մեքենան տեսնելու: Թվացյալ գնորդը նույնիսկ այն վարել էր, ուստի չէր բացառվում, որ հենց նա էլ պլաստիլինով պատճենել էր մեքենայի բանալին:

Պարզվեց այդ անձի ինքնությունը, դեպքին նախորդած ժամերին նրա շարժը:

Եվ այսպես, մայիսի 4-ին տուժողը իր խանութից վերցրել է տոպրակներով զարդերը եւ մեքենայով շարժվել մայրաքաղաքի Խորենացու փողոցի իր արտադրամաս: Օրեր առաջ նրա մեքենան տեսնելու եկած անձը հետեւել է նրա շարժին՝ սպասելով Խորենացու փողոցում: Երբ տուժողը դուրս է եկել արտադրամասից ու շտապել հիվանդանոց՝ ծնողին այցելության, նրան փողոցում սպասող անձը շարունակել է հետեւել: Տուժողը, հասնելով տեղ՝ մեքենան կայանել է ավտոկայանատեղիում եւ մտել հիվանդանոց: Ոոպեներ անց մեքենային է մոտեցել նրան հետեւած տղամարդը, կրկնօրինակ բանալիով բացել դուռը, վերցրել զարդերն ու հեռացել:

Այս ամենը պարզելուց հետո առաջ քաշված վարկածի իսկությունը հիմնավորվեց: Նաեւ օպերատիվ տվյալներ ստացվեցին, որ գողությունը կատարած Արման Սահակյանը մենակ չի գործել. հանցագործության ծրագրմանն ու իրականացմանը մասնակցել է նաեւ տուժողի գործընկեր Տիգրան Գասպարյանը, որը գտնվել է մեքենայում:

Ոստիկանության Մալաթիայի բաժնի քրեական հետախույզները Արման Սահակյանին ու Տիգրան Գասպարյանին հայտնաբերեցին մայիսի 11-ին: Նրանք ներկայացվեցին Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժին:

Հետագա միջոցառումներով՝ իրավապահները հայտնաբերեցին նաեւ գողոնը: Տոպրակներով ոսկյա եւ ադամանդյա զարդերը թաքցված էին Արման Սահակյանի պապի գերեզմանոցում:

Արման Սահակյանն ու Տիգրան Գասպարյանը կալանավորվել են:

Կատարվում է նախաքննություն:

Մ. Ս.

Սարգիս ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կյանքից հեռացավ ոստիկանության պաշտոնաթող փոխգնդապետ Սարգիս Հարությունյանը:

Ծնվել է 1957 թ., Երեւանում: 1979 թ. ընդունվել է ներքին գործերի համակարգ: Ծառայությանը զուգահեռ սովորել է միլիցիայի բարձրագույն դպրոցում:

1983 թ., որպես դասակի հրամանատար, ծառայության է անցել մայրաքաղաքի Սպանդարյան շրջանի ՆԳ բաժնին կից պահպանության բաժնում: 1999 թ., որպես վաշտի հրամանատար, ծառայության է անցել ոստիկանության Կենտրոնական բաժնին կից պահպանության բաժնում: 2011-2012 թթ.՝ մինչեւ թոշակի անցնելը, Չարենցավանի պահպանության բաժնի պետն էր:

Բարեխիղճ ծառայության համար ղեկավարության կողմից բազմիցս արժանացել է խրախուսանքների:

Վստահելի գործընկերոջ, լավ մարդու՝ Սարգիս Հարությունյանի հիշատակը միշտ կմնա նրան ճանաչողների սրտերում:

Հանրապետության ոստիկանության վետերանների խորհուրդ

Սպանություն Արարատի մարզում

Մայիսի լույս 9-ի գիշերը ոստիկանության Մասիսի բաժնում ահազանգ ստացվեց, որ «Մասիս» բժշկական կենտրոն է տեղափոխվել ծեծի հետքերով մահացած կին:

Ահազանգին արագ արձագանքած ոստիկանության օպերատիվ խմբերը կարճ ժամանակում պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ, որոնց արդյունքում հենց հիվանդանոցից, սպանություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Մասիսի բաժին բերման ենթարկեցին Երեւանի բնակիչ, 26-ամյա մի երիտասարդի: Նրա մեքենան էլ տեղափոխվեց ոստիկանության Մասիսի բաժնի պահպանվող հատուկ տարածք:

Նախնական տվյալներով՝ երիտասարդը Այնթապ գյուղի վարչական տարածքում վիճել էր երեսնամյա մի կնոջ հետ, ձեռքերով ու ոտքերով, ռետինե խողովակով ու բանալիով հարվածներ էր հասցրել նրա մարմնի տարբեր մասերին, ապա անզգայացած կնոջն իր մեքենայով տեղափոխել էր «Մասիս» բժշկական կենտրոն:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել քրեական օրենսգրքի 104 հոդվածի՝ սպանության հատկանիշներով:

Ոստիկանները բերման ենթարկվածին ներկայացրել են տարածքային նախաքննական մարմնին: Երիտասարդը կալանավորվել եւ տեղափոխվել է քրեակատարողական հիմնարկ:

Դեպքի բոլոր հանգամանքները օպերատիվ-հետախուզական միջոցառումներով ու քննչական գործողություններով պարզվում են:

Բացահայտումներ Վանաձորում

Ապրիլի 30-ին Վանաձորում ապրող մի տղամարդ ոստիկանության Տարոնի բաժնում հաղորդում տվեց. բացել էին նրա գրասենյակի պատուհանը, մտել ու 50 հազար դրամ եւ բջջային հեռախոսներ գողացել:

Մայիսի 4-ին ոստիկանության Տարոնի բաժնում դարձյալ գողության վերաբերյալ հաղորդում ստացվեց: Տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել էին Վանաձորի Տիգրան Մեծի փողոցի սրճարաններից մեկի դուռն ու գողացել բջջային հեռախոս, տեսանկարահանող սարքավորման «DVR», խմիչք, ինչպես եւ այլ ապրանք՝ պատճառելով մոտ 200 հազար դրամի վնաս:

Ոստիկանության Տարոնի բաժնի քրեական հետախույզները սկսեցին բացահայտման միջոցառումները: Օրեր տեւած հետեւողական աշխատանքի արդյունքում նրանց օպերատիվ տեսադաշտում հայտնվեց Լոռու մարզի Շահումյան գյուղի բնակիչ Անուշավան Մուրադյանը: Վերջին շրջանում համաներմամբ ազատ արձակված երիտասարդին ոստիկանները հայտնաբերեցին մայիսի 6-ին ու կասկածանքով բերման ենթարկեցին բաժին: Մուրադյանը իրավապահներին ներկայացրեց սրճարանից գողացած տեսանկարահանող սարքի «DVR»-ը, որը թաքցրել էր կիսակառույց շինության մոտակայքում:

Պարզվեց նաեւ, որ Անուշավան Մուրադյանը ոստիկանության Արաբկիրի բաժնի կողմից հետախուզվում էր գողության մեղադրանքով:

Հարուցվել է քրեական գործ:

Երեք անձ կալանավորվել է

Մայիսի 7-ից 8-ն ընկած ժամանակահատվածում Կոտայքի մարզի Արգել գյուղում բնակարանային գողություն էր կատարվել:

Իրավապահները պարզեցին, որ բնակարան մտել էին հյուրասենյակի պատուհանը տեխնիկական միջոցների գործադրմամբ բացելով: Հափշտակել էին հեռուստացույց, լուսարձակիչ, ոսկյա մատանի եւ ժամացույց: Տուժողին պատճառվել էր 1 միլիոն 53 հազար դրամի վնաս:

Հարուցված քրեական գործի շրջանակներում ոստիկանության Նաիրիի բաժնի ծառայողները սկսեցին ձեռնարկել տարաբնույթ միջոցառումներ, ինչին միացան նաեւ ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ծառայողները: Համատեղ աշխատանքի շնորհիվ օպերատիվ տեղեկություններ ստացվեցին հանցագործությունը կատարելու մեջ կասկածվող անձանց վերաբերյալ:

Հայտնաբերվեցին ու կասկածանքով ոստիկանության Նաիրիի բաժին բերման ենթարկվեցին Գյումրիի բնակիչ Վարդան Մուճուրյանը, Կոտայքի մարզի Նոր Գեղի գյուղի բնակիչ Կնյազ Հովսեփյանն ու Երեւանում ապրող Իգիթ Գրիգորյանը:

Նրանց մեղադրանք է առաջադրվել: Նրանք կալանավորվել ու տեղափոխվել են քրեակատարողական հիմնարկ:

Կատարվում է նախաքննություն:

Դանակահարությունը բացահայտվեց

Մայիսի լույս 9-ի գիշերը հիվանդանոցից ահազանգեցին ոստիկանության Արարատի բաժին. դանակահարված տղամարդ էր հոսպիտալացվել:

47-ամյա տղամարդու վնասվածքը կրծքավանդակին էր: Բժիշկները վիրահատեցին նրան: Այդ ընթացքում քրեական հետախույզներն արդեն պարզել էին կատարվածի մի շարք հանգամանքներ՝ բացահայտելով հանցագործությունը:

Տուժողը հիվանդանոց էր տեղափոխվել իր տնից, որտեղ մտերիմների հետ կերել-խմել էին: Անհիմն վեճ էր սկսվել, որն էլ հանգուցալուծվել էր տանտիրոջ դանակահարությամբ:

Ոստիկանները պարզեցին մասնակիցների շրջանակը, նաեւ հանցագործությունը կատարելու մեջ կասկածվողի ինքնությունը: 50-ամյա Սուրեն Մինասյանը հայտնաբերվեց եւ բերման ենթարկվեց ոստիկանության Արարատի բաժին:

Հարուցվել է քրեական գործ:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Վերադարձ ձեռնաշղթայով

Քրեական օրենսգրքի 175 եւ 235 հոդվածների հատկանիշներով մեղադրվող Գագիկ Աղաջանյանը հանցակից էր դարձրել 19-ամյա եղբորը՝ Արամին: Ավագ եղբոր ազդեցությունն այնքան մեծ էր, որ Արամն առանց երկմտելու դարձավ նրա հանցընկերը: Հանցագործությունները կատարել են 2013 թվականին: Արամ Աղաջանյանն արդեն կրել է պատիժը: Հետախուզման մեջ գտնվող Գագիկ Աղաջանյանը հայտնաբերվեց վեց տարի անց: Քրեական գործի՝ նրա մասով կասեցված վարույթը վերսկսվել է:

Քսանհինգ հազար դոլար պարտքը ծանր նստել էր Գագիկ Աղաջանյանի շնչին: Իսկ իրավիճակից դուրս գալու ելքը, ըստ նրա, ավազակային հարձակումն էր, մանավանդ, որ որոշ հնարամտություն ցուցաբերելով՝ ձեռք էր բերել ավազակության կարեւոր բաղկացուցիչը՝ զենքը:

Ապահովեց նաեւ մեքենան: Պայմանավորվեց տաքսի ծառայություններից մեկի հետ եւ, օրական տասը հազար դրամ վարձավճարով, «Օպել» մակնիշի մեքենա վերցրեց:

Հաջորդ քայլը ավազակային հարձակման համար համապատասխան «օբյեկտներ» գտնելն էր: Գործողությունների վայր ընտրեց մայրաքաղաքը. հնարավորություններն այստեղ մեծ էին: Թիրախ ընտրելու համար վարձակալած մեքենայով ցերեկը պտտվում էր փողոցներում, «հետախուզում» գործողության վայրը... Մի խոսքով, ամեն ինչ ծրագրածի պես էր, մնում էր անցնել գործի:

Գագիկ Աղաջանյանի պարտատերերից մեկն էլ աներն էր: Կնոջ հորից պարտք չէր վերցրել. նրան պարզապես «զցել էր»:

2010-ի նոյեմբերին աները մայրաքաղաքի իր բնակարանը գրավադրելու համար լիազորագիր էր տվել փեսային: Բնակարանը գրավադրելով՝ Աղաջանյանը տասնութ հազար դոլար էր ստացել, բայց աներոջը տվել էր ութ հազարը: Փեսայի ապերախտությունը զայրացրել էր աներոջը, հետո առաջնորդվել էր պարտքերի մեջ խրված փեսային օգնելու մղումով, մանավանդ, որ նա վստահեցնում էր, թե ձեռնարկելիք հաջող գործարքների շնորհիվ մոտ ժամանակներս կվերադարձնի տասը հազար դոլարը: Իսկ հետո դուստրը պիտի լացակումած պատմեր ամուսնու «քաջագործությունները»...

Մայիսի 8-ին ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ Երեւան-Շարժա չվերթի հաշվառումից հետո բերման է ենթարկվել 62-ամյա Սաշիկ Մ.-ն, որը ՌԴ ՆԳՆ Օմսկի մարզի իրավապահների կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 291 հոդվածի (կաշառք տալը) մեղադրանքով:

Եղբայրները դեկտեմբերի վերջերին, կեսգիշերն անց, Բաղրամյան պողոտայի բուքմեյքերական գրասենյակի մոտ էին: Դուրսն ու ներսը լավ գիտեին, ցերեկը ուսումնասիրել էին: Դիմակավորված մտնում են ներս: Գրասենյակում երեքով էին՝ ընկերության տնօրենը, պահակը եւ մի հաճախորդ: Գագիկը ինքնաձիգը պահում է տնօրենի վրա եւ գոռում՝ հանի՛ր փողերը: Պահակի «Փող չկա» խոսքին հետեւում է կրակոցը. դիմակավորը չէր կատակում: Սարսափահար տնօրենը դրամարկղից հանում է օրվա հասույթը՝ 240 հազար դրամ ու դնում սեղանին: Արամն անմիջապես հափշտակում է փողը, իսկ Գագիկը, իրենց անվտանգ հեռանալն ապահովելու նպատակով, զենքը պահած՝ երեքին էլ մտցնում է խորքի սենյակը, դուռը փակում եւ հրամայում է՝ դուրս չգա՛ք, կկրակեմ: Ապա գետնից վերցնում է կրակված պարկուճն, ու հեռանում են դեպի մեքենան:

Հաջորդ «արշավանքը» հունվարի սկզբներին էր: Այս անգամ աչքադրել էին Խորենացու փողոցի ինտերնետ-ակումբներից մեկը: Սցենարը նույնն էր. դիմակավորված մտել էին ներս եւ զենքը պահելով՝ պահանջել էին փողերը: Ավարը չորս հարյուր հազար դրամ եւ ակումբի փիրուհու զարդերն էին: Հասկանալով, որ այլ ակնկալիք ունենալ չեն կարող՝ ներկաներին զենքի սպառնալիքով մտցրել էին խորքի սենյակն ու կարգադրել դուրս չգալ: Իրենց անվտանգ փախուստն ապահովելով՝ լքել էին գրասենյակը:

Գագիկ Աղաջանյանի համար հատուցման ժամանակը եկավ վեց տարի անց: Հայտնաբերվեց Ռուսաստանի Դաշնության Վորոնեժ քաղաքում եւ օպերատիվ խմբի ուղեկցությամբ տեղափոխվեց Հայաստան:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Ապօրինի ինքնաձիգի հայտնաբերում

ՀԱՊԿ անդամ երկրների տարածքում ահաբեկչության հակազդման ուղղությամբ անցկացվող համալիր-կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ոստիկանության Մեղրիի բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները հայտնաբերել եւ առգրավել են ապօրինի պահվող զենք-զինամթերք:

Մայիսի 3-ին իրացնելով օպերատիվ տվյալները, բերման են ենթարկել Մեղրիում ապրող 41-ամյա մի տղամարդու: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է ծալովի խզակոթով ու գործարանային համարով «Կալաշնիկով» ինքնաձիգ: Նրա ուսապարկում էլ 7,62մմ տրամաչափի 30 փամփուշտով լիցքավորված ինքնաձիգի պահունակ կար:

Նախնական տվյալներով՝ ինքնաձիգը պատկանել է բերման ենթարկվածի հանգուցյալ հորը:

Դեպքի առթիվ ոստիկանության Մեղրիի բաժնում նյութեր են նախապատրաստվում: Ինքնաձիգն ուղարկվել է դատաձգաբանական փորձաքննություն:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Կասկածանքը՝ ավազակություն

Մայիսի լույս 7-ի գիշերը մայրաքաղաքի Արաբկիր վարչական շրջանում ավազակային հարձակում կատարվեց: Ոստիկանություն ահազանգեց Կոմիտասի պողոտայի սուպերմարկետներից մեկի աշխատակիցը: Ահազանգող քաղաքացու փոխանցմամբ՝ բժշկական դիմակով դեմքը քողարկած եւ ձեռնոցներով մի երիտասարդ մտել էր սուպերմարկետում գործող տարադրամի փոխանակման կետ, դանակով եւ նռնակի նմանվող առարկայով սպառնացել ու փող պահանջել: Պահանջները չէին կատարվել, եւ նա, ոչինչ չստանալով, դիմել էր փախուստի:

Ավազակության հատկանիշներով քրեական գործ հարուցվեց:

Ոստիկանության Արաբկիրի բաժնի քրեական հետախույզները սկսեցին իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցագործությունը կատարած անձի ինքնությունը պարզելու եւ նրան հայտնաբերելու ուղղությամբ:

Օպերատիվ աշխատանքին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնի ծառայողները: Համատեղ միջոցառումների արդյունքում պարզվեցին դեպքի մի շարք հանգամանքներ:

Մայիսի 8-ին քրեական հետախույզները ոստիկանության Արաբկիրի բաժին բերման ենթարկեցին իրենց օպերատիվ տեսադաշտում հայտնված երեւանաբնակ մի երիտասարդի, որին ներկայացրին դեպքի նախաքննությունը վարող քննչական բաժին:

Ոստիկանության եւ քննչական կոմիտեի ծառայողները շարունակում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներն ու քննչական գործողությունները՝ դեպքի բոլոր հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Հարուցված քրեական գործով կատարվում է նախաքննություն:

Վեճ՝ դանակահարությամբ

Մայիսի 9-ի գիշերը Արարատի մարզի Բուրաստան գյուղից դանակահարված երկու երիտասարդ տեղափոխվեցին «Արտաշատ» բժշկական կենտրոն:

Տասնյոթամյա տղայի վնասվածքները ձեռքին ու ոտքին էին, տասնվեց տարեկանինը՝ կրծքավանդակի ու որովայնի շրջանում: Մարմնական վնասվածք ստացած երիտասարդները տեղափոխվեցին վիրահատարան:

Բուժհաստատության ահազանգով ոստիկանության Արտաշատի բաժնի օպերատիվ խմբերը շտապեցին հիվանդանոց, ապա Բուրաստան գյուղ:

Օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում ոստիկանության ծառայողները պարզեցին կատարվածի մի շարք հանգամանքներ, պարզեցին դեպքի վայրը՝ Բուրաստան գյուղի Արտաշատի խճուղի:

Նախնական տվյալներով՝ համագյուղացիներին դանակահարել էր 18-ամյա Գարիկ Շահբազյանը:

Գարիկ Շահբազյանը եւ հիվանդանոց տեղափոխված երիտասարդները վիճել էին, ինչն ավարտվել էր դանակահարությամբ:

Ձեռք բերված տեղեկությունների ճշտությունը հիմնավորելուց հետո ոստիկանության Արտաշատի բաժնի քրեական հետախույզները հայտնաբերեցին Գարիկ Շահբազյանին: Մայիսի լույս 9-ի գիշերը կասկածյալը բերման ենթարկվեց Արտաշատի բաժին, որտեղից էլ ներկայացվեց դեպքի նախաքննությունը վարող տարածքային քննչական բաժին:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

Վնասապետի ապօրինությունը

Ոստիկանության Գուգարքի բաժնի ծառայողները, համագործակցելով Լոռու մարզային քննչական վարչության քննիչների հետ, ապրիլի 1-ին պարզել են, որ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Եղեգնուտի անտառտնտեսության Փամբակի մասնաճյուղի անտառապետը, անձնական շահագրգռվածությունից ելնելով, օրենքի խախտում է թույլ տվել:

Ձեռք բերված նախնական տվյալներով պարզվել է, որ մարտ ամսվա կեսերին անտառապահից տեղեկացել է, որ Փամբակի անտառապետության առաջին պահաբաժ1

նում հատվել է տարբեր տեսակի եւ տրամաչափի ութ ծառ: Օրենքով սահմանված կարգով խախտումն արձանագրելու եւ համապատասխան ընթացք տալու իր պաշտոնեական պարտականություններին հակառակ՝ անտառապետը անտառապահին կարգադրել է ծառի ճյուղերով կամ այլ միջոցներով քողարկել հատված ծառերի կոճղարմատները:

Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ քրեական օրենսգրքի 308-րդ (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը) հոդվածի հատկանիշներով:

Նախաքննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

Բացահայտում են Վանաձորի ոստիկանները

Դեպքը կատարվել է 2018 թ. դեկտեմբերի վերջին: Վանաձորցի Մամիկոն Նահապետյանը տուն էր շտապում, երբ բակերից մեկում ոտքը կախ գցեց: Պատճառը աչքով ընկած երկու զույգ կոշիկներն էին: Տեսնելով, որ շրջակայքում մարդ չկա, մտավ բակ եւ կոշիկները գողանալով՝ արագ հեռացավ:

Գողոնը վաճառելու մտադրություն ուներ, սակայն երկու ամիս վաճառքը ձգձգվեց: Ի վերջո, մարտի 1-ին կոշիկները վերցրեց ու շտապեց շուկա: Գնորդ գտնել չհաջողվեց: Տունդարձի ճանապարհին էլ, գողոնով հանդերձ, բերման ենթարկվեց ոստիկանության Բազումի բաժին:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Մամիկոնը խոստովանական բացատրություն տվեց:

Դիմողի բողոքի բացակայությամբ քրեական գործի հարուցումը մերժվել է:

Վանաձոր քաղաքի բնակչուհի Սվետլանա Մինասյանը ոստիկանության Բազումի բաժնում հաղորդում տվեց, որ գիշերը գողացել են խանութի դռան մոտի երկու եղեւնիները:

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում, գողությունը կատարելու կասկածանքով, ոստիկանության Բազումի բաժին բերման ենթարկվեց վանաձորաբնակ Կամո Գալստյանը, որը խոստովանական բացատրություն տվեց: Խանութի մոտով անցնելիս նկատել էր եղեւնիները: Իր այգում տուա եղեւնիներ ունենալու մտադրությամբ էլ որոշեց գողանալ: Տեսնելով, որ տարածքում մարդ չկա, ծառերը արմատախիլ արեց ու, գողոնով հանդերձ, ճանապարհը շարունակեց:

Այս դեպքում եւս բողոքի բացակայության հիմքով քրեական գործի հարուցումը մերժվել է:

Գողոնով հանդերձ ոստիկանության Բազումի բաժնում հանգրվանեց նաեւ Վանաձոր քաղաքի բնակիչ Դայկ Կիրակոսյանը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Դայկը խոստովանական բացատրություն տվեց: Դուրս էր եկել զբոսնելու, երբ չգործող սրճարանի հարեւանությամբ՝ խոտածածկ տարածքում նկատեց մետաղյա աղբարկղ: Այն գողանալու եւ վաճառելու որոշումը միանգամից կայացրեց ու քիչ անց գողոնը ձեռքին՝ տարածքը լքեց:

Դարմար թաքստոցի որոնումների մեջ էր, երբ նրան նկատեցին ոստիկանության աշխատակիցները:

Դայկ Կիրակոսյանի արարքում առկա էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցարարք: Բողոքի բացակայությամբ, սակայն, քրեական գործի հարուցումը մերժվել է:

Կարինե ՄՈՒՐԱԴՅԱՆ

Զվարճալի ամփոփագիր

Ինքնիրավչություն

Ոստիկանություն է զանգել 28-ամյա Վահեն եւ հայտնել, որ բենզալցակայանում իրեն փակի տակ են պահել եւ ցանկանում են սպանել:

Պարզվել է, բենզալցակայանում 52-ամյա տնօրենը ձեծել է Վահեին, իսկ մեկ այլ ընկերության տնօրեն ապտակել է նրան՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Պարզվել է պատճառը՝ Վահեն աշխատանքի ժամանակ յուրացրել է 140 հազար դրամ եւ բջջային հեռախոս:

«Սիգնալի» զոհը

40-ամյա Նաիրին հաղորդում է տվել, որ շենքի հետնամասում ավտոմեքենայի ազդանշան տալու հարցի շուրջ վիճաբանության ժամանակ կնոջ մորաքրոջ որդին մահակով խփել է իրեն եւ իր կնոջը՝ պատճառելով վնասվածքներ:

Ավելի ուշ հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ ականջի պատռված վերքով իրենց մոտ է ընդունվել 36-ամյա Սուրենը:

Պարզվել է, որ նույն վիճաբանության ժամանակ Նաիրին փայտով խփել է Սուրենի դեմքին:

Սուրենը հենց Նաիրիի կնոջ մորաքրոջ որդին է:

Նյարդայնացած կանայք

Ոստիկանություն զանգած 42-ամյա Լիանան հայտնում էր, որ ընկերուհուն դանակահարել է:

Պարզվել է, որ վիճաբանության ժամանակ Լիանան ձեռքերով եւ ոտքերով խփել է ընկերուհուն եւ պատճառել ֆիզիկական ցավ: Իսկ հետո նյարդերը հանգստացնելու համար ապակիով վնասել է իր ձեռքը:

Էտիչը չվերադարձրեց

50-ամյա Վարուժանը հաղորդում է տվել, որ շինանյութի խանութ է վերադարձրել նախորդ օրը գնած ծառ կտրելու մկրատը, սակայն ծագած վիճաբանության ժամանակ խանութի վաճառողն ու նրա որդին ձեռքով ու փայտով խփել են իրեն՝ պատճառելով մարմնական վնասվածքներ:

Տուրիստական սեզոն

Հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ գլխի գագաթային շրջանի պատռված վերքով իրենց մոտ է տեղափոխվել Ֆրանսիայի Հանրապետության մի քաղաքացի:

Պարզվել է, որ նա Աղնջաձոր գյուղի տարածքի «Քարվանսարա» հին իջեւանատուն մտնելիս գլուխն անզգուշաբար խփել է քարին:

Հաղորդում է ստացվել նաեւ, որ «փոքր ոլոքի կոտրվածք՝ առանց տեղաշարժի» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել ՌԴ քաղաքացի, 49-ամյա Սվետլանան:

Պարզվել է, որ նա վնասվածքը ստացել է Չկալովկա գյուղի ռեստորանի ափամերձ հատվածում ոտքը քարին խփելու հետեւանքով:

Սրունքթաթային հոդի սալջարդով բուժօգնության է դիմել ՌԴ քաղաքացի 35-ամյա Վիկտորյան: Նա հայտնել է, որ ոտքն անզգուշաբար ոլորել է Գառնի գյուղում:

«Ուսահոդի փափուկ հյուսվածքների սալջարդ» ախտորոշմամբ բուժօգնության է դիմել Գերմանիայի քաղաքացի, 69-ամյա Շիտեն: Նա հայտնել է, որ վնասվածքը ստացել է Սեւանի թերակղզում՝ ընկնելու հետեւանքով:

Իսկ հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ բուժօգնության է դիմել Գերմանիայի մեկ այլ քաղաքացի՝ 62-ամյա Բռիլհաուսը:

Պարզվել է, որ ճանապարհին նրան կծել է մի անհայտրընկալ թափառող շուն:

Տոլախաղի մեխանիկան

Մարդուն խաղի մեջ ներքաշողը մոլուցքն է՝ ազարտը:

Մոլախաղերը հին են, վտանգավոր ու անվերահսկելի, հատկապես երբ մարդն ունի թուլություններ: Մոլախաղերի դեպքում ամենակարեւորը ժամանակին կանգ առնելն է: Ըստ սոցիոլոգների՝ մոլախաղերը ծաղկում են գերազանցապես ճգնաժամային իրավիճակներում, երբ սոցիալական վայրիվերումներից հոգնած մարդը փորձում է ընդառաջ գնալ հաջողությանը: Ուսումնասիրություններով պարզվել է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներում խաղերի վրա չունեւորներն ավելի շատ ժամանակ ու միջոցներ են ծախսում, քան ապահովվածները: Անգամ խաղալու նպատակներն են տարբեր. չունեւորները խաղում են փող վաստակելու համար, իսկ հարուստները՝ սուր զգացողությունների: Հայտնի ասացվածքն էլ է դա հաստատում. «Իրեն իսկական խաղացող կարող է համարել նա, ով խաղադրույք է անում իր ունեցվածքից ավելի գումար»:

Միջազգային որոշ կազմակերպություններ իրականացրել են ազարտային պահվածքի ծավալուն հետազոտություններ: Ստացված արդյունքները թույլ են տալիս գաղափար կազմել խաղային բիզնեսի զարգացման մասին, ինչպես եւ ներկայացնում են մոլուցքային պահվածքի ամբողջական պատկերը:

Ողջ աշխարհում խաղային բիզնեսը համարվում է ամենաեկամտաբերներից մեկը: Այն ծաղկում է նաեւ մեր իրականությունում՝ խաղային ավտոմատների սրահներ, ինտերնետ խաղասրահներ, խաղատներ: Խաղում են բոլորը՝ պատանիներ, տնային տնտեսուհիներ, գործարարներ, ունեւորներ, չունեւորներ...

Նախկինում խաղատները մայրաքաղաքում էին, այժմ դրանք տեղակայված են Երեւանից դուրս՝ մայրուղիների վրա: Այդ բիզնեսից ստացվում են միլիոններ. մեկը շահում է, մյուսը՝ կորցնում:

Հարց է առաջանում՝ ինչո՞ւ են մարդիկ տարվում մոլախաղերով, ի՞նչ է մոլախաղը՝ հիվանդությո՞ւն, ինքնահաստատման միջո՞ց, թակա՞րդ: Այս հարցերի պատասխանը տալիս են հետազոտությունները: Հարցումների է ենթարկվել տարբեր մասնագիտությունների տեր շուրջ հազար մարդ: Նրանց 70 տոկոսն իրեն համարում է ազարտային, միայն մոտ հինգ տոկոսն իրեն այդպիսին չի համարում:

Ազարտ հասկացությունը շատերը հասկանում են որպես հաղթելու ցանկություն, խաղով տարվել, առաջնորդ լինելը: Կան նաեւ այնպիսիք, որոնք ծայրահեղության են հասնում՝ խաղասեղանին դնելով ամեն ինչ:

Ըստ մասնագետների՝ կան պրոֆեսիոնալ խաղացողներ, որոնց համար խաղը մասնագիտություն է, ինչպես բժշկի, ուսուցչի, բանվորի, հրուշակագործի գործը: Այս խաղացողներն են, որ դրամի կորուստը համարում են ընթացիկ ծախս եւ ներդրում: Հաղթանակը նրանց համար գոյության միջոց է: Նրանց խաղային ռազմավարությունը խարսխված է մաթեմատիկական հաշվարկների եւ մարդկային հոգեբանության իմացության վրա: Նրանց մարտավարությունն է՝ ունենալ պարտության նվազագույն հավանականություն եւ հաղթանակի առավելագույն հնարավորություն:

Հենց նրանց մասին է ասված՝ խաղալ այնքան, մինչեւ հաղթանակի համար ճիշտ պահին հայտնվեն ճիշտ տեղում: Նրանց առաջնորդողը շահույթի միջոցով հարուստ եւ շքեղ կյանք վարելն է:

Ի տարբերություն այս խաղացողների՝ կան այնպիսիք, որոնց համար խաղալը թանկարժեք, բայց ինքնասիրությունը շոյող զվարճանք է: Այս տեսակի խաղացողները կայացել են բիզնեսում, ունեն գերազանց ինքնատիրապետում, կարողանում են վերահսկել իրենց գործողությունները, կարող են թույլ տալ թանկարժեք զվարճանքներ: Պարտությունը նրանց համար ոչ թե դրամական կորուստ է, այլ զգայական ցնցում, սուր զգացողություն: Նման զգացողություն նրանք աշխատանքից ու կյանքից չեն ստանում, եւ բացը լրացնում են այս ճանապարհով: Հաղթանակը նրանց համար ոչ թե գումարային շահույթ է, այլ բավարարվածության զգացողություն: Հաղթանակը ցանկացած բնագավառում շոյում է մարդկային ինքնասիրությունը: Հատկապես՝ երբ հաջորդում է պարտությանը:

Այսպիսի խաղացողները հաշվարկ չեն կատարում: Նրանք պատահականության դաշնակիցն են: Չնայած հոգեբանությունը փոքր-ինչ այլ է: Երբ հաղթում են, պատահականության գործոնը մի կողմ են «հրում»: Նրանք համարում են, որ իրենք արժանի են այդ հաղթանակին: Նման մտածելակերպով անձինք կարծում են, որ իրենց հաջողություններն աշխարհիկ գործերում պայմանավորված են «ընտրյալ» լինելով: Գրեթե բոլոր գործարարները նման կարծիք ունեն: Իրականում նրանք կույր պատահականությունը շփոթում են ինտելեկտի հետ, մեծագույն հաճույք են վայելում «գերխնդիր» լուծելիս: Ուղղակի կարծում են, որ ուրիշները այդ գերխնդիրը լուծելու ունակություն չունեն:

Շարունակելի

Պատրաստեց Տաթեւ ՄԵԺՈՒՆՑԸ

www.police.am

Ըստ ոստիկանության օպերատիվ հաղորդագրությունների ամփոփագրերի՝ մայիսի 8-ից 16-ն ընկած ժամանակահատվածում ձեռնարկված օպերատիվ-փնտրողական եւ բացատրական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել կամ կամավոր ներկայացել է 32 հետախուզվող:

Հայտնաբերվածներից 1-ը հետախուզվում էր ծեծի, 1-ը՝ բնակարանի անձեռնմխելիությունը խախտելու, 2-ը՝ գողության, 1-ը՝ գողության փորձի, 3-ը՝ խարդախության, 1-ը՝ ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու, 2-ը՝ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր, տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու, 2-ը՝ նրանց միջեւ ստորադասության (ենթակայության) հարաբերությունների բացակայության դեպքում զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելու համար:

Հայտնաբերվել է այլ երկրների կողմից 6 հետախուզվող:

Արձանագրվել է 95 ճանապարհատրանսպորտային պատահար. 10 մարդ զոհվել է, 131-ը՝ ստացել մարմնական վնասվածքներ:

Արձանագրվել է վրաերթի 31 դեպք. 5 մարդ զոհվել է, իսկ 28-ը ստացել են մարմնական վնասվածքներ:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Հանրապետության ճանապարհներին

Մայիսի 12-ին Երեւանի Մյասնիկյան պողոտայում իրար են բախվել «Մերսեդես», «Միցուբիշի», «Նիսան» եւ «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի 31-ամյա վարորդը տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 13-ին Երեւանի Արմենակյան փողոցում «Նիսան» մակնիշի ավտոմեքենան բախվել է կայանված «Մերսեդես» եւ «ԵրԱԶ» մակնիշի ավտոմեքենաների, այնուհետեւ «Մերսեդես»-ը առաջ ընթանալով՝ բախվել է կայանված «Հոնդա»-ին: «Նիսան»-ի վարորդը եւ 50-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 13-ին Երեւանի Քաջազնունու փողոցում անհայտ ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել երեք քաղաքացիների, որոնք մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 13-ին Մասիս քաղաքի գերեզմանատան դիմաց իրար են բախվել «ՋԻԼ ՄՄԶ-4413» եւ «Տոյոտա Ցելիցա» մակնիշի ավտոմեքենաներ. «Տոյոտա Ցելիցա»-ի 26-ամյա վարորդը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 13-ին Վանաձորի Նժդեհի փողոցում իրար են բախվել «ԲՄՎ-528» եւ «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենաներ. «Օպել Վեկտրա»-ի 59-ամյա վարորդը եւ «ԲՄՎ-528»-ի 55-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 13-ին Զառիթափ-Գոմք ճանապարհի 6-րդ կմ-ին «ՎԱԶ-2105» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ գլորվել. 35-ամյա վարորդը տեղում մահացել է:

■

Մայիսի 13-ին Երեւանի Սեւանի խճուղում «Մուլտի Լեն» բենզալցակայանի մոտ իրար են բախվել «Մերսեդես» եւ «Օպել» մակնիշի ավտոմեքենաներ. «Մերսեդես»-ի երկու ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 14-ին Երեւանի Գարեգին Նժդեհի փողոցում «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 78-ամյա քաղաքացու, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 14-ին Երեւանի Սողոմոն Տարոնցու փողոցում «Հայասա» մոտոցիկլը բախվել է կայանված «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայի. 51-ամյա մոտոցիկլիստը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 14-ին Երեւանի Ռուբինյանց փողոցում իրար են բախվել երկու «Մերսեդես», «Շկոդա» եւ «ԳԱԶ-322132» մակնիշի ավտոմեքենաներ. «ԳԱԶ-322132»-ի 62-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

■

Մայիսի 14-ին Ոսկետափ-Վեդի ճանապարհի 5-րդ կմ-ին «ՎԱԶ-2106» մակնիշի ավտոմեքենան բախվել է «Օպել Վեկտրա» մակնիշի ավտոմեքենայի. «ՎԱԶ-2106»-ի 54-ամյա վարորդը եւ 51-ամյա ուղեւորուհին մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 15-ին Հրազդան-Հանքավան ճանապարհի 26-րդ կմ-ին «Օպել» մակնիշի ավտոմեքենան դուրս է եկել երթեւեկելի գոտուց եւ կողաշրջվել. վարորդը եւ 36-ամյա ուղեւորը մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց:

■

Մայիսի 14-ին Աբովյան քաղաքի Տարտուի փողոցում «Օպել» մակնիշի ավտոմեքենայի վարորդը վրաերթի է ենթարկել 16-ամյա աղջկա, որը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է հիվանդանոց:

Լեգենդար հետախույզը. Գեւորգ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Սկիզբը՝ նախորդ համարում

Հայտնի է 1943 թ. Թեհրանում Գեւորգի եւ Գոհարի կատարած հսկայածավալ աշխատանքը, որի արդյունքում կանխվեց մահափորձը «Մեծ եռյակի»՝ Ստալինի, Ռուզվելտի եւ Չերչիլի դեմ: Լրատվական միջոցներն անընդհատ նշում են Գեւորգ եւ Գոհար Վարդանյանների անունը՝ մոռանալով, որ նրանց ուղղորդում եւ ղեկավարում էր խորհրդային հետախուզության հանճարներից մեկը՝Իվան Աղայանցը:

Ինչպես նշում էր Գեւորգ Վարդանյանը. «Աշխարհի հետախուզական ծառայությունների հիմնախնդիրը դավաճաններն են: Բացահայտման կարող է հանգեցնել նաեւ հետախույզի անհոգությունը, սակայն միշտ չէ, որ հնարավոր է ամեն ինչ կանխատեսել»: Նման մի դեպք եղել էր Վարդանյանների հետ: Արտասահմանյան երկրներից մեկում Գոհար Վարդանյանը վարսավիրանոցում թույլ էր տվել անփութություն. ռուսերենով էր դիմել ամուսնուն: Ի բարեբախտություն, ոչ ոք չէր լսել, քանի որ զբաղված էին իրենց գործով: Հաջորդ օրը Գեւորգ Վարդանյանն ընդունում է մեկտողանոց ծածկագիր-ռադիոգիր: Նման ռադիոգրեր Կենտրոնն ուղարկում էր միայն այն դեպքում, երբ հետախույզներին վտանգ էր սպառնում: Հեռագրում ասված էր. «Գնդապետ Գ. Ա. Վարդանյանին շնորհավորում ենք Խորհրդային Միության հերոսի կոչման արժանանալու համար»: Հայտնի է, որ խորհրդային երկու նշանավոր հետախույզներ Ռիխարդ Զորգեն եւ Նիկոլայ Կուզնեցովը այդ բարձրագույն կոչմանն արժանացել են հետմահու:

Ծառայության բերումով Գեւորգ Վարդանյանը երեք անգամ տարբեր երկրներում ամուսնացել է կնոջ՝ Գոհարի հետ: 1951 թ. տեղափոխվել է Երեւան եւ սովորել Երեւանի պետական համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում:

Իր առաջին՝ «կապիտան» զինվորական կոչումը Գեւորգ Վարդանյանն արժանացել է 44 տարեկանում: ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Անդրոպովը տեղեկանալով, որ լավագույն հետախույզներից մեկը երբեք չի ատեստավորվել եւ չունի զինվորական կոչում, հրամայում է շնորհել սպայական աստիճան: Յոթ տարի անց Գեւորգ Վարդանյանն արդեն գնդապետ էր:

1986 թ. Վարդանյան ամուսինները վերջնակապես ավարտում են հետախուզական գործունեությունը: Գեւորգ Վարդանյանի՝ որպես հետախույզի անունը հասարակությունն իմացավ միայն 2000 թվականին:

Գեւորգ Վարդանյանի գործունեության ամենակարեւոր գրավականներից է կնոջ՝ Գոհարի աջակցությունը: Հազվադեպ է լինում, երբ զույգերը նման ծայրահեղ պայմաններում գործեն այդպես ներդաշնակ, ինչպես Գեւորգյան ամուսինները: Ինչպես վկայում է անվտանգության աշխատակիցներից մեկը, երբ ինչ-որ հարցի մասին զրուցում էին, տիկին Գոհարը դիմում էր ամուսնուն՝ «Ժոռա, այդ մասին կարելի՞ է խոսել»: Գոհարը նաեւ ամուսնու անձնական ռադիստուհին էր:

Արտասահմանում հետախույզ ամուսինները աշխատում էին խուսափել հայերի հետ հանդիպումներից: Գեւորգ Վարդանյանը կատակով այսպես էր բացատրում. «Ինձ չեն կարողացել բացահայտել աշխարհի ուժեղագույն հետախույզները, սակայն բավական էր ծանոթանալ մեկ հայի հետ, եւ արդեն տասը րոպե անց նա կիմանար, թե ով ես, ովքեր են քո ազգականները: Շուտով քեզ կբացահայտեն, քանի որ հայկական համաշխարհային տեղակատվությունը ամենահզորն է»:

Տեր եւ տիկին Գեւորգյանները

2013 թ. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, ի հիշատակ նշանավոր հետախույզի, սահմանեց «Գեւորգ Վարդանյան» գերատեսչական մեդալը: Ազգային անվտանգության ծառայության պատմությանը նվիրված թանգարանում ներկայացվել են Վարդանյան ամուսինների օպերացիաների որոշ նյութեր: 2014 թ. մայիսի 17-ին Երեւանի Վ. Բրյուսովի անվան համալսարանում տեղադրվեց հուշատախտակ:

Պատրաստեց **ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆԸ**

Ամերիկայի մոլագարները

Միացյալ Նահանգները վստահաբար կարելի է տարատեսակ մոլագարների երկիր համարել: Երկրի ողջ պատմության ընթացքում այդ կարգի հանցագործներն այնքան շատ են եղել, որ միայն թվարկումը կարող է հազարավոր էջեր կազմել: Ընդ որում, դրանց «մասնագիտացումն» էլ բազմազան է: Բայցեւայնպես խնդրի հրատապությունը գիտակցվեց միայն 1984 թվականին, երբ Կոնգրեսի որոշումով ստեղծվեց Բռնի հանցագործությունների վերլուծության ազգային կենտրոնը:

Էդ Հեյն

Ջեֆրի Դամեր

1984 թ. ԱՄՆ հոգեբուժական կլինիկաներից մեկում մահացավ նշանավոր մարդասպան Էդ Հեյնը (Վիսկոնսին նահանգ), որը բնօրինակ էր դարձել հանրահայտ «Գառների լռությունը» ֆիլմի մոլագար հերոսի համար: Հեյնը 70-ական թվականներին «հռչակվեց» նրանով, որ սպանելով կանանց ու հանելով նրանց մաշկը՝ բավարարում էր իր տրանսսեքսուալ երեւակայությունը: Դատարանը նրան հոգեկան հիվանդ ճանաչեց ու տեղավորեց հիվանդանոցներից մեկում, որտեղ էլ մահացավ:

Նույն թվականին հայտնվեց եւս մի մոլագար, որն իր արյունոտ «հերոսություններով» հավակնում էր թիվ 1 զանգվածային մարդասպանի կոչմանը: Անունը Ջեյմս Մաքհովեն էր: Զինված ուժերի ծովային հետեւակում ծառայած եւ հոգեկան շեղումների համար պահեստազոր արձակված Մաքհովենը 80-ականների սկզբին վերադարձավ Միսիսիպի նահանգի Հալֆպորտ փոքրիկ քաղաքը եւ մի քանի տարի անց սեքսուալ սպանությունների ուղին բռնեց: Ընդ որում, որսի էր ելնում տարբեր նահանգներում (հետագայում պարզվեց՝ 19 նահանգում) եւ յոթ տարվա ընթացքում 60 մարդ սպանեց: Նրա վերջին զոհը 10-ամյա մի աղջնակ էր, որին նախ բռնաբարել, ապա սպանել էր: Այդ ընթացքում հոգեկան աշխարհն այնպես էր քայքայվել պարբերական սպանությունների հետեւանքով, որ Մաքհովենը չէր դիմացել ու անձամբ էր ներկայացել ոստիկանություն:

Համարյա միաժամանակ ոստիկանության ձեռքն ընկավ մոլագար Ջեֆրի Դամերը, որի հանցագործություններն իսկական ցնցում էին նույնիսկ բռնությունների սովոր Ամերիկայի համար:

Դամերը ծնվել էր քիմիկոս գիտնականի ընտանիքում: Ծնողները լավ էին վաստակում ու ոչինչ չէին խնայում նրա եւ կրտսեր եղբոր համար: Բայց, պարզվում է, ամեն ինչ չէ, որ կարգին էր այդ ընտանիքում. տղայի մայրը տառապում էր հոգեկան խանգարմամբ, եւ այդ հողի վրա Դամերների տանը հաճախ սկանդալներ էին լինում: Այդ ամենը հանգեցրեց նրան, որ ծնողները բաժանվեցին, ինչը ողբերգություն էր 18-ամյա Ջեֆրիի համար: Այդ ժամանակ նա դպրոցում ակտիվ հասարակական աշխատանք էր վարում, խաղում էր թենիսի հավաքականում, նվագում նվագախմբում, երազում էր ավարտել տեղի համալսարանն ու բիզնեսով զբաղվել: Բայց այդ ամենը նրան վիճակված չէր...

1978 թվականին, երբ ծնողները բաժանվեցին, ու Ջեֆրին ավարտեց դպրոցը, նա առաջին անգամ ձեռքերը տաքացրեց մարդկային արյունով: Ռոք համերգի գնալիս ծանոթացավ անչափահաս Սթիվեն Հիքսի հետ, բայց ճանապարհին տղաներն ինչ-որ բանի համար վիճեցին, ու Դամերը խեղդեց Հիքսին: Ոստիկանությունը չկարողացավ «տաք հետքերով» գտնել մարդասպանին, իսկ 1979-ին Դամերին զորակոչեցին բանակ, եւ նա հեռացավ ոչ միայն հայրենի նահանգից, այլեւ Ամերիկայից: Զինվորական բախտը նրան հասցրեց Գերմանիա, Բաումհոլդեր ռազմական բազա, որտեղ որպես սանիտար էր ծառայում: Սակայն մեկ տարի անց զորացրվեց հարբեցողության համար:

Ամերիկա վերադառնալուց հետո Դամերն ապրում էր Մայամիում, իսկ 1982-ի հունվարին տեղափոխվեց տատի մոտ՝ Միլուոկի: Հենց այնտեղ էլ առաջին անգամ ձերբակալվեց 13-ամյա անչափահասի հանդեպ հոմոսեքսուալ ոտնձգության համար: Սակայն արդարադատությունը բարեհաճ էր 22-ամյա Դամերի հանդեպ, ու գործը դատարան չհասավ: Նախազգուշացում ստացած Դամերը խոստացավ, որ այլեւս նման բան չի անի: Իրականում ուղղվելու մասին չէր էլ մտածում...

Շարունակելի

Հետախուզվում էին խարդախության համար

Խարդախության դեպքը ոստիկանության Արաբկիրի բաժնում գրանցվել էր ինը տարի առաջ: Ոստիկանություն դիմած քաղաքացին հայտնում էր, որ ոմն Արմեն, ներկայանալով որպես սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության աշխատակից, փողը հաջորդ օրը փոխանցելու պայմանով, իրեն պատկանող արտադրական ձեռնարկությունից վերցրել է հինգ հարյուր հազար դրամ արժողության A3 եւ A4 ձեւաչափի թղթեր: Օրերն ամիս էին դարձել, եւ ձեռնարկատերը հասկանալով, որ խաբվել է, դիմել էր ոստիկանություն: Ոստիկանության Արաբկիրի քննչական բաժնում հարուցված քրեական գործի շրջանակներում ճշտվեց ոմն Արմենի ինքնությունը, նաեւ հայտնի դարձան նրա մյուս նույնատիպ գործերը:

Արմենն իրականում խարդախության համար նախկինում երկու անգամ դատապարտված Հակոբ Վարդապետյանն էր: Նրան հայտնաբերել, սակայն, չհաջողվեց. մեկնել էր հանրապետությունից: Հայտարարվեց հետախուզում: Նախապատրաստված նյութերով ու ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումներով պարզվեց, որ Հակոբ Վարդապետյանը, ներկայանալով որպես ՍՊԸ-ի աշխատակից, երկուսուկես միլիոն դրամի թուղթ էլ վերցրել էր մեկ այլ ՍՊԸ-ից` դարձյալ փողը հաջորդ օրը փոխանցելու պայմանով:

Սովորաբար նման առուվաճառքը հաճախադեպ է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողների միջեւ. միմյանց վստահում են ու շահում երկուստեք: Իհարկե, եթե որեւէ կողմը խարդախ չէ:

Քրեական հետախույզները պարզեցին նաեւ, որ Հակոբ Վարդապետյանը միայն «թղթի գործ» չէր անում: Ներկայանալով «Կարմիր խաչի» աշխատակից` մի ՍՊԸ-ից, փողը հետո փոխանցելու պայմանով, վերցրել էր մոտ կես միլիոն դրամի գինի եւ օղի: Տասնհինգօրյա ժամկետում փողը փոխանցելու պայմանով երեք միլիոն դրամի ոգելից խմիչք էլ վերցրել էր մեկ այլ ՍՊԸ-ից: Սահմանափակ պատասխանատվությամբ մի ընկերություն էլ հինգ հարյուր հազար դրամի վնաս էր կրել. Հակոբ Վարդապետյանն այդ արժողությամբ շինարարական ապրանք էր վերցրել` պայմանավորվելով, որ փողը կփոխանցի մեկ-երկու օրում:

2010 թ. նոյեմբերին որոշում կայացվեց քրեական օրենսգրքի 178 հոդվածի հատկանիշներով (խարդախություն) Հակոբ Վարդապետյանին ներգրավել որպես մեղադրյալ: Նրան հայտնաբերելու համար միջազգային հետախուզում հայտարարվեց:

Ռուս գործընկերների հետ ակտիվ համագործակցության հերթական արդյունքը Հակոբ Վարդապետյանի հայտնաբերումն էր: Ռուսաստանի Դաշնության Նովոսիբիրսկ քաղաքում տնավորված Հակոբ Վարդապետյանը ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության օպերատիվ խմբի ուղեկցությամբ տեղափոխվեց Հայաստան:

Քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվել է:

Խարդախության եւս մի դեպք ներկայացնենք, այս անգամ` կատարված 2017 թվականին:

Դեպքը կատարվել էր Աբովյան քաղաքում: «ԵրԱԶ» մեքենայի վարորդին էր մոտեցել մի երիտասարդ, եւ վճարի դիմաց խնդրել էր իրեն տանել Աշտարակ` այնտեղից որոշ իրեր Աբովյան տեղափոխելու համար: Վարորդը համաձայնել էր: Աշտարակի կենտրոնական հրապարակի մոտ երիտասարդը, Աշտարակում ունեցած անհապաղ գործի համար, հարյուր հազար դրամ էր խնդրել վարորդից, որը հետո կվերադարձներ Աբովյանում` իրերը տեղափոխելու համար տրվելիք գումարի հետ: Վարորդը չէր մերժել. Էդիկ ներկայացած ուղեւորի հետ մինչեւ Աշտարակ այնքան էին դեսից-դենից խոսել, որ մտերմացել էին: Երիտասարդը «էսա կգամ» ասելով` իջել էր մեքենայից ու... չէր վերադարձել:

Ոստիկանության Աշտարակի բաժնի աշխատակիցների ձեռնարկած միջոցառումների արդյունքում պարզվել էր, որ ոմն Էդիկը Արագածոտնի մարզի բնակիչ Հարություն Վանյանն է:

Նրան հայտնաբերել չէր հաջողվել` արտագնա աշխատանքի էր մեկնել:

Հայտնաբերվեց երկու տարի անց` Բագրատաշենի սահմանային անցակետում:

Կասեցված քրեական գործի վարույթը վերսկսվել է:

Բռնության գործադրում

Ոստիկանության Նոր Նորքի բաժնում հարուցված երեք տարբեր քրեական գործերը բռնության հատկանիշներով են:

Առաջինը վերաբերում է ընտանեկան բռնությանը: Պարբերաբար բռնարարքներ կատարողը որդին էր: Պատկերացնելի է, թե նա ինչպիսի արարքներ էր թույլ տալիս, որ հայրը ստիպված էր ոստիկանություն դիմել: Տղան վերցվել էր կանխարգելիչ հաշվառման, նրա նկատմամբ անհետաձգելի միջոցառում կիրառելու որոշում էր կայացվել եւ արգելվել էր 5-օրյա ժամկետում ծնողների բնակարան գնալ, բայց դա խախտել էր նույն օրն իսկ` գուցե վստահ, որ իր տուն գնալն արգելելը անլուրջ է: Այն, որ հայրն ահազանգել էր ոստիկանություն` խնդրելով ոստիկան ուղարկել իր հասցեով, վկայում է, թե որքան մեծ էր վախը որդու ներկայությունից:

Երկրորդ դեպքում բռնարարքի պատրաստ անձը այն գուցեեւ իրականացներ, եթե այդ մասին ժամանակին չտեղեկացվեին իրավապահները: Տղամարդը, ում միայն անունն էր հայտնի կատարվածի մասին հայտնողին, այցելել էր նրա տուն ու որդուն ուղղված մարմնական վնասվածքներ պատճառելու սպառնալիքներ հնչեցրել: Առանց հանգամանքների մանրամասների մեջ խորանալու, նշենք, որ սպառնալիքներն այնքան իրական էին, որ որդու փոխարեն հայրն ընդունել էր միակ ճիշտ լուծումը` ապավինելով օրենքի պահապանների օգնությանը:

Երրորդ դեպքում մեկի նկատմամբ բռնություն էին գործադրել յոթ-ութ հոգի: Հետո ծեծվողին քարշ էին տվել ավտոմեքենան ու տարել: Կեսգիշերային այս վայրագության ականատեսը ահազանգել էր օպերատիվ կառավարման կենտրոն, որտեղից հաղորդում ստանալով` ոստիկանության Նոր Նորքի բաժնի աշխատակիցները հայտնաբերեցին ծեծողներին:

Հարուցվել է քրեական գործ:

Ռիտա ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հոդված 345

Քրեական օրենսգրքի 345 հոդվածը պատիժ է սահմանում արգելանքի տակ գտնվող կամ բռնագրավման ենթակա գույքի նկատմամբ ապօրինի գործողություններ կատարելու համար: Այս հանցատեսակը հաճախադեպ չէ. արգելանքի տակ գտնվող գույքը վաճառելու համար պետք է մի շարք խոչընդոտներ հաղթահարել: Բայցեւայնպես, «համարձակներ» լինում են, ինչպես, օրինակ, մայրաքաղաքի բնակիչ Մինաս Վարդանյանը:

Նրա նկատմամբ հարուցված քրեական գործի կասեցված վարույթը վերսկսվեց, երբ հայտնաբերվեց եւ ներկայացվեց նախաքննական մարմնին:

2008 թվականին հիմնադրված սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր տնօրենը Մինաս Վարդանյանն էր: Ընկերությունը զբաղվելու էր եվրոդռների ու պատուհանների արտադրությամբ:

Գործունեությունը ընդլայնելու եւ հումք ձեռք բերելու նպատակով 2010 թվականին բանկերից մեկի հետ վարկային պայմանագիր են կնքում: Վարկը տրամադրվում է գրավադրման պայմանով: Երկու հարյուր հիսուն հազար դոլար վարկի դիմաց ընկերությունը գրավադրում է անշարժ գույք` հաստոցներ, սարքավորումներ: Վարկը տրամադրվում է տասը տարի ժամկետով եւ տասնհինգ տոկոս տարեկան տոկոսադրույքով:

ՍՊԸ-ի ձեռնարկատիրական գործունեությունը, սակայն, 2012 թվականի վերջերին ձախողվեց: Կուտակված պարտքերը` մի կողմից, վարկի մարման ուշացումները` մյուս կողմից, ընկերությանը կանգնեցրին փաստի առաջ: Վարկային պայմանագրի ժամանակացույցով սահմանված վճարումների ժամկետները խախտելու, հետո նաեւ` չվճարելու համար վարկատու բանկը, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի համապատասխան հոդվածը, 2015 թվականի փետրվարին ընկերության առաջ հստակ պահանջ դրեց` մեկամսյա ժամկետում վերադարձնել վարկի ամբողջ գումարը` տոկոսների հետ, վճարել տույժերն ու տուգանքները: Նաեւ իրազեկեց` պահանջը չկատարելու դեպքում կիրականացվի գրավի առարկաների` ընկերության գույքի բռնագանձում:

Մեկամսյա ժամկետը ձգվեց մինչեւ տարեվերջ: Ի վերջո, բանկը դիմեց դատարան: Հայցը բավարարվեց: Հօգուտ բանկի բռնագանձվեց պարտապան ընկերության գույքը եւ մինչեւ աճուրդի իրականացումը` այն ի պահ տրվեց ընկերության գործադիր տնօրեն Մինաս Վարդանյանին:

Բայց մինչեւ աճուրդը կկայանար, Մինաս Վարդանյանը ժամանակավորապես իր պահպանությանը հանձնված գույքը վաճառեց: Հարմար գնորդ գտավ հարեւան Վրաստանի Հանրապետությունից եւ երկուստեք հարմար գնով վաճառեց: Ինչպես հետո վկայեց սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության պահակը` «Գիշերը տնօրենն անծանոթ մարդկանց հետ եկավ ու բեռնատարով տարավ հաստոցները»:

Էլեկտրոնային տարբերակով աճուրդը կայացավ: Հարկադիր վաճառքի հանված գույքը գնելու հաղթող ճանաչվեց նույն բանկը: Բայց երբ եկան ընկերության տարածք, գույքն արդեն տեղում չէր. Մինաս Վարդանյանն օտարել էր իրեն վստահված անօտարելին...

Փաստով քրեական գործ հարուցվեց: Բայց մինչ այդ Մինաս Վարդանյանը լքեց հանրապետության տարածքը: Հանցագործությունը կատարած անձի գտնվելու վայրն անհայտ լինելու հիմքով քրեական գործի վարույթը կասեցվեց... տասնմեկ տարով: Տասնմեկ տարի անց Մինաս Վարդանյանը հայտնվեց քրեական պատասխանատվության փաստի առաջ:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Գողացողը տանտերն էր

Մայիսի 2-ի երեկոյան ոստիկանություն զանգած տղամարդը հայտնում էր, որ բնակարանը թալանել են: Նրա հայտնածով` տնից բացակայել էին ժամը 11-ից մինչեւ 20-ը. վերադառնալով` տեսել էին, որ տունը տակնուվրա է արված, ոսկյա շղթան էլ չկա: Ըստ ահազանգողի` բնակարանի դուռը բացել են տեխնիկական միջոցների գործադրմամբ:

Բնակարանը Դավիթաշեն վարչական շրջանի 1-ին թաղամասում է: Ոստիկանության Մաշտոցի բաժնի եւ Դավիթաշենի բաժանմունքի ծառայողները, ձեռնարկելով օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, պարզեցին, որ բնակարանային գողության վերաբերյալ ահազանգը կեղծ է: Ոստիկանություն ահազանգած 33-ամյա տանտերը ոսկե շղթան կնոջից գաղտնի գրավադրել էր, ապա բնակարանը խառնշտել` տպավորություն ստեղծելով, որ օտար մարդ է մտել ու գողություն արել:

Տղամարդը հրավիրվեց ոստիկանություն եւ խոստովանեց` պատճառաբանելով, որ այդ քայլին դիմել է ֆինանսական խնդիրները լուծելու եւ ընտանեկան անախորժություններից խուսափելու համար:

Դեպքի հանգամանքները պարզվում են:

Մարտուն ՍԻՄՈՆՅԱՆ

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Օպերատիվ

«Պրոֆեսիոնալ» խարդախում

Armավիրի մարզի բնակիչ Վահան Բաղդասարյանը երեք տարի է՝ հետախուզվում էր խարդախության համար: Դանցագործությունը բացահայտվել էր: Փաստի առթիվ հարուցված քրեական գործը որպես խափանման միջոց նախատեսում էր ստորագրությամբ բաց թողնելը: Բաղդասարյանը մտածելով, թե «հաշիվները ոստիկանության հետ մաքրեց-պրծավ», անհայտ ուղղությամբ հեռացել էր բնակության վայրից: Նրան հայտնաբերելու համար հայտարարվել էր հետախուզում: Դայտնաբերվեց երեք տարի անց եւ ՌԴ Պերմի մարզից տեղափոխվեց Դայաստան:

Վահան Բաղդասարյանը կատարել էր մի շարք խարդախություններ՝ մեկ օրով բնակարան վարձելուց եւ այնտեղ եղած կենցաղային տեխնիկան վաճառելուց մինչեւ կեղծված փաստաթղթերով օրավարձով վերցրած մեքենաներ վաճառելը:

Քաղաքացիների վստահությունը չարաշահելու մեխանիզմը լավ ծանրութեթեւ էր արել: Նախ մի քանի ծանոթից, արտերկրում աշխատանքի տեղավորելու պատրվակով, անձնագրեր եւ վարորդական իրավունքի վկայականներ էր վերցրել: Փաստաթղթերի վրա հմտորեն իր լուսանկարն էր փակցրել, ապա անցել գործի: Իր նկարով եւ ուրիշի անուն-ազգանունով փաստաթղթերով Երեւանի համակարգչային սրահներից մեկից ապառիկ նոթբուք էր վերցնել՝ վճարման բեռը թողնելով անձնագրի իրական տիրոջ ուսերին: Նույն եղանակով եւ վճարման պայմաններով հեռախոս էր վերցրել մի խանութ-սրահից:

2015 թ. սեպտեմբերին ոստիկանության Արաբկիրի բաժին դիմած քաղաքացին հայտնել էր, թե Աշոտ Պետրոսյան անուն-ազգանունով մեկը օրավարձով վերցրել է իր «Օպել Աստրա» մակնիշի մեքենան եւ անհետացել:

Ոստիկանության տարբեր բաժիններում նույնաոճ խարդախությունների վերաբերյալ տեղեկությունները քրեական հետախույզներին հիմք տվեցին ենթադրելու, որ գործում է նույն մարդը: Օպերատիվ-հետախուզական միջոցառումները քրեական հետախույզներին տարան Արարատի մարզ, որտեղ Վահան Բաղդասարյանը բնակիչներից խաբեությամբ անձնագրեր էր վերցրել: Պարզվեց, որ խարդախը համացանցային առուվաճառքի կայքերից մեկում տեղեկանալով, որ մարզի մի բնակիչ իր մեքենան, որպես տաքսի, օրավարձով տրամադրում է ցանկացողներին, հանդիպել էր նրան, ներկայացրել կեղծված փաստաթղթերի պատճենները, վերցրել էր մեքենան ու...

Նույն եղանակով ձեռք բերված վերջին մեքենան էլ մի աշտարակցու էր պատկանում. «բեհը» վերցնելով՝ նրան էլ էր խաբել ու հեռացել:

Այդպես եւս երեք հոգուց մեքենա էր վերցրել ու վաճառել:

Վահան Բաղդասարյանի հանցավոր գործունեության փաստերով նյութեր էին նախապատրաստվել նաեւ ոստիկանության մի շարք այլ ստորաբաժանումներում:

Ռուս իրավապահների հետ ակտիվ համագործակցության արդյունքում հայտնաբերվելուց եւ Հայաստան տեղափոխվելուց հետո Վահան Բաղդասարյանը վերհիշեց իր «հերոսությունները»: Նաեւ «անկեղծացավ». իբր իսկապես ցանկացել է արդար վաստակով ապրել, բայց ո՛չ անձնագիր ուներ, ո՛չ վարորդական իրավունքի վկայական եւ ստիպված ուրիշինն էր կեղծել հանուն հանապազօրյա հացի:

Վահան Բաղդասարյանը կալանավորված է:

Կասեցված գործի վարույթը վերսկսվել է:

Հասմիկ ՊՈՂՈՍՅԱՆ

Բնակարանագողությունը բացահայտվեց

Դեպքը ապրիլի 22-ին Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում էր կատարվել: Օգտվելով տանտերերի բացակայությունից՝ երկու երիտասարդ հարմարեցված բանալիով բացել էին Հրաչյա Ներսիսյան փողոցի բնակարաններից մեկի դուռը, հափշտակել էին փող, բջջային հեռախոս ու... տանտերերն անակնկալ ներս էին մտել: Բռնել չէր հաջողվել: Գողոնի մի մասը թողած՝ փախել էին:

Կատարվածի մասին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում տեղեկացան ժամը 18-ի սահմաններում՝ օպերատիվ կառավարման կենտրոնից: Հաշված րոպեներ անց քրեական հետախույզները դեպքի վայրում էին: Դռան փականը վնասված չէր: Տուժողները դժվարանում էին հստակ նկարագրել: Հարեւաններն էին անծանոթ երիտասարդների տեսել: Ըստ նախնական տվյալների՝ նրանցից մեկը միջահասակ էր, գեր, մյուսը՝ ցածրահասակ, փոքրամարմին:

Քրեական հետախույզները ուսումնասիրեցին հարակից շենքերի եւ օբյեկտների մոտ տեղադրված տեսախցիկների տեսագրությունները: Հրաչյա Ներսիսյան փողոցում տեսահսկող սարքերը ֆիքսել էին երիտասարդներին: Բայց միայն նրանց արտաքինը պարզելը բացահայտման համար քիչ էր, անհրաժեշտ էր ճշտել անձնական տվյալները, գտնվելու վայրը եւ, որ ամենակարեւորն էր, հայտնաբերել:

Բացահայտման աշխատանքներին միացան նաեւ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ծառայողները, եւ համագործակցությունը դրական արդյունք տվեց: Որոնողական աշխատանքների արդյունքում տեղեկություններ ստացվեցին, որ հանցագործությունը հնարավոր է կատարած լինեն Արամ Բաղդասարյանը եւ Աղվան Գրիգորյանը: Մայիսի 3-ին ոստիկանները Գոգոլի փողոցի տներից մեկում երկուսին էլ հայտնաբերեցին եւ բերման ենթարկեցին ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին:

Իրավապահները խուզարկություններ են կատարել Աղվան Գրիգորյանի եւ Արամ Բաղդասարյանի բնակության վայրերում: Բաղդասարյանի բնակության վայրից հատնաբերվել են բնակարանային գողության համար նախատեսված տարբեր չափսի ու տաշվածքների բանալիներ, գործիքներ, զանազան կեռիկներ...

Քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Գոռ ՎԱՆՅԱՆ

«Կարմիր խաչի» «ներկայացուցիչը»

Մայիսի 3-ին, գիշերվա ժամը 3.00-ի սահմաններում, ոստիկանության Ճամբարակի բաժնում հաղորդում ստացվեց: 1-02 զանգած Աղբերք գյուղի բնակչուհին հայտնում էր, որ անասունների հետ կապված պարզաբանման խնդիր կա, եւ ոստիկանների միջամտությունն էր ակնկալում:

Ոստիկանության Ճամբարակի բաժնից Աղբերք գյուղ մեկնեց հերթապահող օպերատիվ խումբը: Տեղում ծանոթանալով խնդրին՝ ոստիկանները նկատեցին, որ գյուղացիների ներկայացրած իրավիճակում առկա են խարդախության հատկանիշներ: Բաժին հրավիրվեցին ենթադրյալ տուժողները եւ հաղորդում տվեցին: «Կարմիր խաչի» ներկայացուցիչ ներկայացած անձը, գնելու նպատակով խաբեությամբ վերցրել էր անասուններ, սակայն փողը չէր վճարել: Երեք գյուղացուց վերցրել էր 20 ոչխար, 9 գառ, 3 կով, 13 մոզի եւ 15 խոզ՝ պատճառելով շուրջ 7 միլիոն դրամի վնաս:

Ոստիկանության Ճամբարակի բաժնում հարուցվեց քրեական գործ:

Մայիսի 5-ին ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր եւ Գեղարքունիքի մարզային վարչությունների, Մասիսի եւ Ճամբարակի բաժինների ծառայողների համատեղ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվեց խարդախությունը կազմակերպած անձանց ինքնությունը: Պարզվեց նաեւ, որ հափշտակված կենդանիներից 16 խոշոր եղջերավորները 2 միլիոն 2 հարյուր հազար դրամով վաճառվել էին Արարատի մարզի Մարմարաշեն գյուղի մի բնակչի: Ոստիկաններին հաջողվեց հայտնաբերել եւ առգրավել խոշոր եղջերավորներից 15-ը. գնորդը մեկն արդեն մորթել ու վաճառել էր:

Հետագա միջոցառումներով պարզվեց նաեւ, որ խաբեությամբ հափշտակված 20 ոչխարներից 9-ը նույնպես վաճառվել են, եւ գնորդը դրանք պահում է Արարատի մարզի Բաղրամյան գյուղի իր անասնաֆերմայում:

Քննությունը շարունակվում է:

Էրիկ ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

Հայտնաբերվել են հետախուզվողներ

Մայիսի 8-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել Վրաստանի քաղաքացի Ռոլանդ Ա.-ն, որը 2018 թ. փետրվարից հետախուզվում էր ՌԴ ՆԳՆ Ռոստովի մարզի իրավապահների կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 159 հոդվածի (էլեկտրոնային վճարումների խուլիգանությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Աշոցքի բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ մայիսի 9-ին Բավրայի սահմանային անցակետում հայտնաբերվել եւ ոստիկանության Աշոցքի բաժին բերման է ենթարկվել 46-ամյա Լուսինե Ս.-ն, որը 2007 թ. փետրվարից հետախուզվում էր ՌԴ Մոսկվայի Դաշնային անվտանգության ծառայության կողմից՝ ՌԴ քրեական օրենսգրքի 322, 327 եւ 30 հոդվածների մեղադրանքներով:

◆

Մայիսի 10-ին ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզները Կիեւյան փողոցից բերման են ենթարկել Դավիթաշեն գյուղի բնակիչ Գագիկ Մ-ին, որը 2018 թվականից հետախուզվում էր գողության մեղադրանքով:

◆

Մայիսի 10-ին ոստիկանության Երեւան քաղաքի վարչության քրեական հետախույզները Հալաբյան փողոցից, գողություն կատարելու կասկածանքով, ոստիկանության Մաշտոցի բաժին բերման են ենթարկել Խաչիկ Ս.-ին: Պարզվել է, որ նա թիվ 28 երթուղու ավտոբուսի սրահում գողացել է մի ուղեւորուհու դրամապանակը, որի մեջ եղել է փող ու բանկային քարտեր: Նրա անձնական խուզարկությամբ դրամապանակը հայտնաբերվել է:

◆

Ոստիկանության Մաշտոցի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ մայիսի 10-ին Երեւանի Կիեւյան փողոցից բերման է ենթարկվել 44-ամյա Գագիկ Մ.-ն, որը 2018 թ. դեկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Հրազդանի բաժնի քրեական հետախույզների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների եւ բացատրական աշխատանքների շնորհիվ մայիսի 11-ին Մոսկվա-Երեւան չվերթի ինքնաթիռով ՌԴ-ից Հայաստան է վերադարձել 24-ամյա Մանուկ Մ.-ն, որը 2018 թ. դեկտեմբերից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 177 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

◆

Մայիսի 13-ին Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ոստիկանության Բագրատաշենի բաժանմունք բերման է ենթարկվել 60-ամյա Խաչիկ Մ.-ն, որը 2015 թ. հուլիսից ոստիկանության Մուշի բաժնի կողմից հետախուզվում էր քրեական օրենսգրքի 178 հոդվածի (խարդախությունը) մեղադրանքով:

◆

Ոստիկանության Մալաթիայի բաժնի ծառայողները, իրացնելով օպերատիվ տվյալները, Երեւանի Կուրղինյան փողոցից ոստիկանության Մալաթիայի բաժին բերման են ենթարկել 28-ամյա Հենրիկ Մ.-ին, որը ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի իրավապահների կողմից հետախուզվում էր ՌԴ քրեական օրենսգրքի 158 հոդվածի (գողությունը) մեղադրանքով:

«02»-ի օպերատիվ հրապարակումները վերջնական ճշմարտության հավակնություն չունեն, իսկ դեպքերը ներկայացվում են անմեղության կանխավարկածի եւ նախաքննության շահերի պահպանման տեսանկյունից: Վերջնականը դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռն է:

Ժան ...
Նավի հետնամաս
Կարոս / Ձիու մարմնի մաս
Օվիդիոս ... / Հայ բանաստեղծ
Ըմբշամարտ / Տուպոլեւ, Միկոյան
Թանկարժեք քարերի կշռաչափ
Մալի / Լենայի վտակ
Ռումբ / Մողես / Մատուռ
Մարզ, ՀՀ / Ազգություն, Ասիա
Ամանոր
Բնակարանի մաս / Ցից
Գրային նշան / ... դե Վեգա
Լուսաբաց / Գետ, Եվրոպա
Նոտատետրի նեցուկ / Լինգ
Լուի ...
Ակութ / ... Բոնապարտ
Հայոց տոմարի ամիս / Քաղաք, Կանադա
Շտապ
Հատապտուղ / Լիճ, ՌԴ
Գեղարդ
Ժխտական ածանց / Անգարայի վտակ
... Էյնշտեյն
Ռուս կինոռեժիսոր / ... Կաբաեւա
Ֆիզիկայի բաժին / Խոփի թողած հետքը
Նայա / Արյունատու անձ
Ավտոբուս
Աստղ, Կառավար համաստ.
Կոնյակ
Իսպան. նավահանգիստ
Ընտիր ձի
Իսպանացի երգահան / Լիճ, Ղազախստան
Անգլիացի փիլիսոփա
Ֆրանսուա ...
Պայծառության հնացած միավորը
Զարդաքար
Կապիկ / Չամուսնացած
... Բոլիվար
Հին հնդկական պոեմ
Բուլղար էստրադ. երգչուհի
... Գիբսոն / Ռումին. քաղաք
Անտառի անարեւ մաս
«Սեւիլյան սափրիչը»
Ճապոն. երգահան / Ալբանիայի դրամ
Տարի / Գետ, ՌԴ
Թեթեւ հեծելազորային
Գետ, Ֆրանսիա / ՌԴ մարզ-կենտրոն
Աբիսողոմ ... / «... առագաստներ»
Ուրվական
Մեռնող եւ հարություն առնող
Վախ / Սերգեյ ...
ճավա կղզու թունավոր բույս
Վրացական ժող. երգ
... Խրուշչովով
Համաստեղություն
Նախամայր / Աքցանի տեսակ
Անգույն, անհոտ գազ
... Վեգաս
Հունգար բանաստեղծ
Հայկական խաղ
Քաղաք, Թունիս / ... Յակովլեւ
... էմե
«Աշտարակ-...»
Դատական նիստի մասնակից / Զոքանչ
Մակույկի կողքին
Փայտե գլխով մուրճ
Բնակարան
... Զոլա
... Ռոդնինա / Հատկանիշ
Թունավոր հեղուկ

Ուշադրություն

Հարգելի քաղաքացիներ՝

ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչությունը երաշխավորում է ձեր բնակարանների եւ ամառանոցների անվտանգությունը, եթե դրանց պահպանությունը վստահեք ձեր բնակության վայրի պահպանության ստորաբաժանմանը:

Պահպանության համար գանձվելիք վարձավճարները անհամեմատ մատչելի են:

Մինչեւ 120ք/մ մակերես ունեցող բնակարանների, տների, ամառանոցների տեխնիկական միջոցների տեղադրման աշխատանքները կկատարվեն անվճար, իսկ պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 5000-15000 դրամ:

120 ք/մ-ից ավելի մակերես ունեցող տարածքների համար պահպանության ամսական վարձավճարները կկազմեն 10000-30000 դրամ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել 57-19-22 (Կենտրոն համայնք), 39-00-26 (Մալաթիա համայնք), 57-02-14 (Էրեբունու համայնք), 35-14-21 (Մաշտոց համայնք), 63-05-74 (Նոր Նորք համայնք), 44-21-23 (Շենգավիթ համայնք), 23-82-00 (Արաբկիր համայնք), 24-10-41 (Քանաքեռ-Զեյթուն համայնք):

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ապրիլ 17.05 - 23.05

Խոյ - Հանգստյան օրերը կարող են նշանավորվել նոր տնտեսական հոգսերով:

Ցուլ - Շաբաթը ներդաշնակ է, եթե ցանկացած ժամի պատրաստ եք քրտնաջան աշխատանքի:

Երկվորյակ - Ստիպված կլինեք հիշել կենցաղի, տան, ընտանեկան պարտականությունների մասին:

Խեցգետին - Շաբաթվա ընթացքում ոչինչ չի խանգարի ռոմանտիկ գաղափարներին հավատարիմ մնալուն:

Առյուծ - Կարող է նոր գործնական նպատակ ի հայտ գալ, իսկ դրա հետ նաեւ՝ անհանգստանալու նոր առիթ:

Կույս - Կույսերի արարքներն ավելի գործնական են դառնում, ինչը դրական է ազդում ցանկացած միջոցառման ելքի վրա:

Կշեռք - Խորհուրդ չի տրվում այս հանգստյան օրերի համար կարեւոր միջոցառում ծրագրել, պատասխանատու քայլ կատարել:

Կարիճ - Հանգստյան օրերը կօգնեն հարմարվել շրջակա միջավայրի փոփոխություններին կամ սեփական նոր դերին:

Աղեղնավոր - Ուշադրություն դարձրեք գործերի տնտեսական կամ տեխնիկական կողմին: Հնարավոր է ստիպված լինեք ժամանակավորապես հետաձգել սեփական ծրագրերը:

Այծեղջյուր - Հանգստյան օրերին կբացվի նոր շրջան, ինչը կարող է բեղմնավոր լինել: Հաջող ժամանակահատված է սխալների ուղղման համար:

Ջրհոս - Կարող է գործունեության դաշտ բացվել՝ կապված տան, տարածքի, ունեցվածքի հետ: Հնարավոր է հետաքրքրություն տան, արհեստանոցի բարեկարգման նկատմամբ:

Ձուկ - Խորհուրդ չի տրվում նախաձեռնություն դրսեւորել, սակայն չի արգելվում ուղի հարթել շրջանցիկ ճանապարհներով:

Փորձեք լուծել

Խնդիր N1



Սպիտակները սկսում են եւ հաղթում 2 քայլից

Խնդիր N2



Սպիտակները սկսում են եւ հաղթում 3 քայլից

Նախորդ խնդիրների պատասխանները

Խնդիր N1 1. e1-d2 a7:e3 2. d2:a3x

Խնդիր N2 1. e3-d4 c3:e5 2. a5-b6 a7:c5 3. b4:d6x

Պատրաստեց
Նշան ԱԼԱՎԵՐԴՅԱՆԸ
Շաշկու Հայաստանի չեմպիոն, IDF վարպետ, սպորտի վարպետ

Նախորդ համարի սկանվորդի պատասխանները

«02 շաբաթաթերթ» ՓԲԸ: Հասցեն՝ Նալբանդյան-130: Հեռ. 56-00-05, 54-81-52, 59-67-75 (հաշվապահություն): Համարի թողարկման պատասխանատու՝ Ն. Աթաբեկյան:
Գրանցման վկայական՝ 27312002739: Տրվել է՝ 13.03.2000 թ.: Ծավալը՝ տպագրական 2 մամուլ: Ստորագրված է տպագրության՝ 16.05.2019 թ., ժ. 17.00-ին: Տպաքանակը՝ 6950:
Համակարգչային շարվածքը՝ «02» շաբաթաթերթի: Տպագրվել է «Հենակետ» ՓԲԸ տպարանում: Հղումը «02»-ին պարտադիր է:
Չպատվիրված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում: Խմբագրությունը հեղինակների հետ գրագրություն չի վարում: Գովազդի պատասխանատուն պատվիրատուն է: